


կենդանեաց կարգը կ'անցնէ : Արբեմն այս աշխատութեան ատեն այնպիսի խիճի մը կը հանդիպի , որ չի կրնար գլխովը վեր նետել . չի յուսահատիր , հապա գլուխը աւազէն դուրս հանած՝ կը ջանայ ծանրութիւնը կռնակին վրայ առնելու . մարմնոյն ծայրը քարին տակ կը կ'երկընցընէ և այնպէս կը շարժի՝ որ այն բեռը թիկանցը մէջ տեղը սահեցընէ . ետքը այնպէս հաւասարակչիւ բռնած պէտք է որ վեր ելլայ գրեթէ ուղղահայեաց բարձրութենէ մը : Արաւ դժուարին աշխատանք , վասն զի երբեմն աջակողմէն երբեմն ձախակողմէն բեռը իյնալու վտանգի մէջ է , ամէն մէկ ճօճմունք կրնան արգելք ըլլալ , և շատ անգամ երկայն ջանքէն ետև քարը կը սահի՝ բայց ինքը միտքը դրածը չի փոխեր . որչափ որ բազզը զինքը փորձէ , ինքն ալ իւր շարտարութիւնը ՚ի գործ դնելէն չի դադրիր մինչև որ քարը բոյնէն հեռացընէ :

Աշխատութիւնը ու համբերութիւնը կը յաղթանակեն . ձագարը ամբողջ կը ձևանայ . հիմայ մըջմնառիւծին ուրիշ բան չի մնար ընելիք բայց եթէ իրեն պիտոյքը հոգալ : Արդ անշարժ իր բոյնին խորը կեցած որսին կը սպասէ . երբեմն պէտք կ'ըլլայ երկայն ատեն անօթի մնալ , մինչև որ աւարող մըրջիւն մը կամ մոլորեալ նեպուկ մը դան ու բոյնին բերնին քով թափառին . հազիւ թէ ոտուրնին հոն դնեն մէկէն բոլորած պատը կը փլչի , դժբաղք ճանապարհորդը պարապ տեղ կը ջանայ նորէն հաստատուն երկրի վրայ կոխել : Արջմնառիւծը վրան աւազէ կարկուտներ կը թափէ , կը յաղթէ անոր ու իրեն աւար կ'ընէ , և իրեն հարկաւոր կերակուրը հանելէն ետքը , չորցած սատակը խոտորնակի կռնակը առած բոյնէն հեռու կը նետէ :

Այսպէս կ'անցնի մըջմնառիւծին երկտասարդութիւնը : Արբոր կը հասնի ծերութիւնը՝ որ է իր վերջի փոփոխութեան ատենը , ալ կերակրոյ համար չաշխատիր . վասն զի ալ այն դանդաղ միջատն չէ՝ որ գետնին վրայ կը

սողար . հապա իր խոշոր մորթը ձգելով՝ ազատ և երագաշարժ ջրաձանձ մը կը դառնայ՝ որ ծիծռան պէս ջրերուն երեսը ժիր ժիր թռչելով կ'որսայ . ու շատ չուշանար իր հաւկիթները աւազին մէջ ձգելու . անով իր կենաց ճակատագիրն ալ կը կատարուի :



Հողախէր ու ծառաբնակ ժողովուրդ :

ՎԻՆՆՈՒԱԾ է որ այրեցած գօտուոյն տակը եղած ժողովուրդներէն ոմանք անյագ փափաք մը ունին հող ուտելու . մանաւանդ տեսակ մը պարարտ կա որ սուր հոտ ալ ունի : Այ մանաւոր ախորժակը ունեցողները կը գտնուին ՚ի նոր կայեգոնիա , Ղաւա կղզին , Ախնէայի ու Փէրուի մէջ , բայց գլխաւորապէս Վերիկա շատ կը գտնուին : Հումպոլդ մեծ երկրագրին ալ աս բանիս վրայօք տուած մանրամասն ու ճիշդ տեղեկութիւնները ալ տարակոյս չեն թողուր : Վերնէն աւելի աս զարմանալի ախորժակը ունեցող ժողովուրդն է ()դդումաք ըսուածը որ ()րէնոք գետին եզերքը կը բնակին : Վանի որ գետին ջրերը ցած են՝ ձկնեղէնով ու կրիայով կը կերակրին . բայց երբոր ջրերը տարեկան յորդութեամբ կը բարձրանան՝ և ալ որս չըլլար , ()դդումաք կը սկսին այն պարարտ ու իւղային հողը ուտել , որ բրտի կաւի կը նմանի՝ երկրթի ժանգի գունով : Վսիկայ կը զանգեն նկանակի պէս ու մաղմաղ կրակով կ'եփեն , և ետքը իրենց հիւղերուն մէջ կը դիզեն . և երբոր կ'ուզեն ուտել՝ նախ կը թրջեն . սովորական չափով , կ'ըսէ Հումպոլդ , մէկ հոգի օրը լիպրէ մը հողին չորսին իրեքը կամ հընգին չորսը կ'ուտէ : Աեծ հոգ ունին աս կերած հողին ընտրութեանը վրայ , վասն զի շատ համուլ կու գայ իրենց . անոր համար նոյն իսկ ցամաքութեան ատենն ալ թէպէտ և ձկանց առատութիւն ունենան՝ ամէն օր կերակրի վրայէն կ'ու-

տեն հողէ նկանակներէն ալ իբրև համադամի տեղ :

Արդեօք արուեստական ախորժակ մ'է ասիկայ՝ նախ անօթուծեանէն քրգուած ու ետքը վարժութիւն եղած, թէ հողը սնունդ տալու զօրութիւն ունի, դեռ երկար փորձերու կարօտ է այս բանս ստուգելու . այս միայն ստոյգ է որ () զդոմաքք աղտեղի և տգեղ ժողովուրդ մըն են՝ որ իրենց կերակրոյն վրայ շատ համարմունք չի տար :

() րենոք գետին բերնին մօտ մէկ ազատ ժողովուրդ մ'ալ կայ ուրիշ եզակի սովորութեամբ մը, աս ժողովուրդը Աուարանի կ'ըսուի . անձրևային եղանակներուն երբոր երկիրը ջրով կը ծածկի՝ կապիկներու պէս ծառերուն վրայ կը բնակին : Հովանոցաձև մալրիտեան ըսուած արմաւենին թէ կերակրոյ և թէ բնակութեան կը ծառայէ իրենց . ասոր տերեւոյն ջրերովը խտիրներ կը հիւսեն, և ծառէ ծառ կը ձգեն : Այս կախաղանաւոր բնակարանները մասամբ կաւով գոցուած են . կրնիկները աս թաց հողին վրայ քիչ մը կը րակ կը վառեն կերակրի համար . գիշերատեն գետին վրայ նաւարկող ճանապարհորդը օդին մէջ բարձր շարուած կարգաւ բոցեր կը տեսնայ : Ատեն կուգայ որ մաւրիտեան արմաւենւոյն ծուծը սակուի նման ալիւր մը կ'ըլլայ՝ որ բարակ հացի նման կը չորցընեն . բոյսին հիւթէն ալ թթուեցընելով ախորժակ համը զօրաւոր գինի մը կը շինեն . իսկ պտուղները՝ ինչպէս ուրիշ այրեցած գօտւոյն տակի եղածները՝ կը զանազանին համով ըստ զանազան աստիճանի իրենց հասունանալուն :

Այսպէս, կ'ըսէ Հումպոլդ, մարդկային քաղաքականութեան ամենէն վարի աստիճանին մէջ գտուող ժողովուրդը իր կենաց եուծիւնը մէկ ծառի մը հետ կապած է, նման ան միջատներուն որոնք միայն ծաղկի քանի մը մասերով կ'ապրին :

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

(արժան օրացոյց :

ՎԱՂԱՂԱՅ | Կիլլենոյցի 25 տարուան գեղացի մը (Յովսէփ Վիւսոն անունով, որ այնչափ միայն ուսումնական դաստիարակութիւն ունեցեր է՝ ինչ որ գեղերը գեղացի տղոց կը տրուի, զարմանալի ձեռագործ մը շիներ լումբնոցներ է աս մօտերս . այնպիսի ձեռագործ մը՝ որ շինելու համար ուսումնականութեան ու մեքենականութեան շատ ընդարձակ տեղեկութիւններ հարկաւոր էին :

Փայտէ ժամացոյց մ'է աս ձեռագործը, որ հնարողը արժանապէս (արժան օրացոյց կ'անուանէ : Ատ ցուցակներ ունի, որ կը ցուցընեն ժամը, վայրկեանը, երկվայրկեանը, շաբթուն օրը, ամսուն օրը, տարւոյն ամիսը, տարին, դարը, արևուն ելլալն ու մտնալը, լուսնին ելլալն ու մտնալը, և այլն . բոլորն ալ ամենայն ճշդութեամբ :

Անիւնները ապակիի մը ետև այնպիսի վարպետութեամբ շարուած են, որ լաւ կ'երևնայ թէ ինչպէս բարակ է բանուածքը ու շարժմունքները կանոնաւոր : Յուցակներուն ու անիւներուն վրան գրեթէ մէկ մեծրի երկայնութեամբ մակերևութի մը վրայ գեղեցիկ զարդարուն սրահ մը կ'երևնայ, մէջ տեղը խցիկներ, երկու ծայրերն ալ մէկ մէկ աշտարակ : Աամը զարնելու ատենը խցիկին մէկուն դուռը կը բացուի ու մահը իր մանգաղովը դուրս կ'ելլայ, Յիսուս ալ խարազանը ձեռքը ետևէն զինքը կը հալածէ ու ուրիշ խցիկի մը մէջ կը հրէ ու դուռը վրայէն կը գոցէ : Աամացոյցը երբոր առջի զարնուածքը կ'ընէ՝ պզտիկ սքաղաղ մը աշտարակներուն մէկուն վրայի խաչին վրայ կեցած՝ թւերը կը թօթվէ ու վիզը կ'երկընցընէ իբրև թէ ձայն կը հանէ : Աամ զարնելը լումբնապէն ետև՝ մահն ու Յիսուս նորէն իրենց խցիկները կը դառնան, ու ներս մտնալէն ետև դրաներնին ալ կը գոցեն : () րը իրեք ան